ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

<<ՀՔ-ԱԴՊՈԱԿ-ՊԸԱՇՁԲ-16/1>> ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք. Չարենցավան _06_ _սեպտեմբերի_ _2016թ._
ժամը _16^{00}_

Մասնակցում էին հանձնաժողովը հետևյալ կազմով՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Ադամյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Մամիկոնյանը, Տ. Քեշիշյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Շ. Հարությունյանը

1. Տեղեկատվություն գնման առարկայի ընդհանուր նախահաշվային գնի և հայտեր ներկայացրած մասնակիցների մասին
(Կ. Ադամյան)

1.1 Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> թիվ 168-Ն որոշման 44-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման առարկայի ընդհանուր նախահաշվային գինը՝ մեկ թվով արտահայտված.

Հ/հ	Աշխատանքի անվանումը	Աշխատանքի ընդհանուր նախահաշվային գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)
1	ԿԳՆ <<Չարենցավանի Մ. Մաշտոցի անվան ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի սպորտդահլիճի վերանորոգման աշխատանքներ	Երկու միլիոն յոթ հարյուր վաթսունհինգ հազար երկու հարյուր հիսուներեք 2765253

1.2 Ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակիցների		
	Անվանումը	Գտնվելու վայրը (հասցեն)	Կապի միջոցները
1	<<Շինվերելակ>> ՍՊԸ	Կոտայքի մարզ, գ. Զովունի 7 փողոց 92/3	Էլ. հասցեն՝ shinverelak.spe@mail.ru Հեռ. 043-54-54-38
2	<<ԱՇԿԱՐ>> ՍՊԸ	Կոտայքի մարզ, գ. Ֆանտան	Էլ. հասցեն՝ taron.epremyan@mail.ru Հեռ. 077-40-40-04
3	<<ԱՐՏԱՄԱՐԷ>> ՍՊԸ	ք. Չարենցավան, 6-րդ թաղամաս, 8-րդ շենք, բնակարան 15	Էլ. հասցեն՝ artamare2004@mail.ru Հեռ. 093-52-50-06
4	<<ՇԻՆՍԵՐՎԻՍԻՍ>> ՍՊԸ	ք. Երևան, Անտառային 170	Էլ. հասցեն՝ mksveta32@mail.ru Հեռ. 077-82-81-22, 010-54-56-01
5	<<Արա-Արաքս Գրուպ>> ՍՊԸ	ք. Սևան, Գրիբոյեդովի 12 բնակարան 25	Էլ. հասցեն՝ ara-araks@mail.ru Հեռ. 077-61-98-66
6	<<ՍԱՍՈՒՆԱՍԱՐ>> ՍՊԸ	ք. Երևան, Ազատության նրբանցք 4 շենք, 75 բնակարան	Էլ. հասցեն՝ stepanyan-andranik@rambler.ru Հեռ. 094-20-52-68, 099-20-52-76

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

2. Տեղեկատվություն հայտեր պարունակող ծրարների կազմման և ներկայացման համապատասխանության մասին
(Կ. Ադամյան)

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտեր պարունակող ծրարները կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

3. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի (հայտում առկա փաստաթղթերի)՝ հրավերի պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին
(Կ. Ադամյան)

3.1 <<Շինվերելակ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը (հայտում ներառված փաստաթղթերը) կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

3.2 <<ԱՇԿԱՐ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը (հայտում ներառված փաստաթղթերը) կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

3.3 <<ԱՐՏԱՄԱՐԷ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը (հայտում ներառված փաստաթղթերը) կազմված են հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ՝

ա) Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի համաձայն՝

- վճարման պահանջագրի համարը լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագիրը ներկայացնելիս, այնինչ <<ԱՐՏԱՄԱՐԷ>> ՍՊԸ-ի կողմից լրացված է,
- վճարման պահանջագրի ներկայացման ամսաթիվը լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը, այնինչ <<ԱՐՏԱՄԱՐԷ>> ՍՊԸ-ի կողմից լրացվել է վերոնշյալ ամսաթիվը:

3.4 <<ՇԻՆՍԵՐՎԻՍԻՍ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը (հայտում ներառված փաստաթղթերը) կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

3.5 <<Արա-Արաքս Գրուպ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը (հայտում ներառված փաստաթղթերը) կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

3.6 <<ՍԱՍՈՒՆԱՍԱՐ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը (հայտում ներառված փաստաթղթերը) կազմված են հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ՝

ա) Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի համաձայն՝

- վճարման պահանջագրի գումարը (թվերով և բառերով) դաշտը պարտադիր լրացվում է վճարողի կողմից, այնինչ <<ՍԱՍՈՒՆԱՍԱՐ>> ՍՊԸ-ի կողմից լրացված չէ,
- վճարման պահանջագրի արժույթը (բառերով և կոդով) դաշտը պարտադիր լրացվում է վճարողի կողմից, այնինչ <<ՍԱՍՈՒՆԱՍԱՐ>> ՍՊԸ-ի կողմից լրացված չէ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

4. Տվյալներ մասնակիցների կողմից ներկայացրած գնային առաջարկների մասին
(Կ. Ադամյան)

4.1 Մասնակիցների կողմից առաջարկված գնային առաջարկները ներկայացված են ստորև.

Հ/h	Մասնակիցների անվանումները	Մասնակիցների կողմից առաջարկված գները (ՀՀ դրամ), ընդ որում՝				
		Ինքնարժեք	Շահույթ	Առաջարկ-ված գինը (առանց ԱԱՀ-ի)	ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գինը
1	<<Շինվերելակ>> ՍՊԸ	1743000	191730	1934730	-	1934730
2	<<ԱՇԿԱՐ>> ՍՊԸ	1847000	203170	2050170	410034	2460204
3	<<ԱՐՏԱՄԱՐԷ>> ՍՊԸ	1524000	167640	1691640	338328	2029968
4	<<ՇԻՆՍԵՐՎԻՍԻՍ>> ՍՊԸ	1780000	178000	1958000	-	1958000
5	<<Արա-Արաքս Գրուպ>> ՍՊԸ	1600000	160000	1760000	352000	2112000
6	<<ՍԱՍՈՒՆԱՍԱՐ>> ՍՊԸ	1925000	192500	2117500	423500	2541000

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

5. Տվյալներ ներկայացված հայտերի գնահատման արդյունքների և առաջին ու հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին
(Կ. Ադամյան)

5.1 Ղեկավարվելով <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց.

ա) Գնահատել բավարար <<Շինվերելակ>> ՍՊԸ-ի, <<ԱՇԿԱՐ>> ՍՊԸ-ի, <<ՇԻՆՍԵՐՎԻՍԻՍ>> ՍՊԸ-ի, <<Արա-Արաքս Գրուպ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը.

բ) Գնահատել անբավարար և մերժել <<ԱՐՏԱՄԱՐԷ>> ՍՊԸ-ի, <<ՍԱՍՈՒՆԱՍԱՐ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը:

5.2 Ներկայացված և բավարար գնահատված հայտերի հիման վրա առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ ճանաչել հետևյալ հայտատուներին:

Մասնակիցների զբաղեցրած տեղերը	Մասնակիցների անվանումները
Չափաբաժին 1 - ԿԳՆ <<Չարենցավանի Մ. Մաշտոցի անվան ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի սպորտդահլիճի վերանորոգման աշխատանքներ	
1	<<Արա-Արաքս Գրուպ>> ՍՊԸ
2	<<Շինվերելակ>> ՍՊԸ
3	<<ՇԻՆՍԵՐՎԻՍԻՍ>> ՍՊԸ
4	<<ԱՇԿԱՐ>> ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

6. Գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից կատարվելիք գործողությունների մասին
(Կ. Ադամյան)

6.1 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան՝

ա) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 2.3 կետի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ.

բ) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից եզրակացության ստացման ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրել գնահատման թերթիկների երկուական օրինակ և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Կ. Ադամյան
(ստորագրությունը)

Հանձնաժողովի անդամներ՝ _____ **Վ. Մամիկոնյան**
(ստորագրությունը)

_____ **Տ. Քեշիշյան**
(ստորագրությունը)

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ **Շ. Հարությունյան**
(ստորագրությունը)

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

<<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված շահերի բախման բացակայության մասին

Մենք՝ ներքոստորագրողներս, հայտարարում ենք, որ <<ՀՔ-ԱԴՊՈԱԿ-ՊԲԱՇՁԲ-16/1>> ծածկագրով պարզեցված ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունենք շահերի բախում:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ **Կ. Ադամյան**
(ստորագրությունը)

Հանձնաժողովի անդամներ՝ _____ **Վ. Մամիկոնյան**
(ստորագրությունը)

_____ **Տ. Քեշիշյան**
(ստորագրությունը)

_06_ _սեպտեմբերի_ _2016թ._